զորքերի թիվը հասնում էր 70 հազարի[4], սակայն ավելի ստույգ կարելի է համարել Ջալալ ադ-Դինի կենսագիր ան-Նասավիի և Ս. Օրբելյանի համահնչուն վկայությունները[5] և այդ թիվը ճշգրտել 60 հազարով[6]։ Այսպիսով, հայ-վրացական զորքերի թվաքանակի հարցում աղբյուրները գրեթե նույնահաղորդ են, ինչը չի կարելի ասել խորեզմշահի բանակի վերաբերյալ։ Վրաց ժամանակագիրը խորեզմցիների զորքերի քանակը հաշվում է 140 հազար, իսկ Վարդան Արևելցին այդ թիվը հասցնում է 200 հազարի[7]։ Այս խիստ չափազանցված թվերին հակառակ, Ռաշիդ ադ-Դինը խորեզմցիների բանակի մեծությունը սահմանափակում է 30 հազարով[8], բավական դժվար խնդրի առաջ կանգնեցնելով հետազոտողներին։ Հարցի պարզաբանմանը, թվում է, կարող են նպաստել իրադարձություններին ժամանակակից հեղինակ ալ-Բաղդադիի վկայությունները, որոնք նա քաղել է վեց տարի Թբիլիսիում ապրած մի բժշկից։ Վերջինիս կարծիքով, խորեզմցիների թվաքանակը չի հասել 100 հազարի, այլ եղել է թերևս 60 հազար[9]։ Եթե նկատի առնենք ան-Նասավիի հաղորդումն այն մասին, որ մինչև Գառնիի ճակատամարտը Ջալալ-ադ-Դինի զորքերի մեծ մասը մեկնել էր այլևայլ երկրամասեր, ապա հասկանալի կդառնա հայ-վրացական բանակի քանակական գերկշռության մասին խորեզմշահի կենսագրի հավաստիացումը[10]։ Այդ գերակշռությունը, այնուամենայնիվ,

---

[4] «Материалы по истории Азербайджана из Тарих ал-Камиль (Полного свода истории) Ибн ал-Асира», перевод П. Жузе, Баку, 1940, с. 156 (այսուհետև՝ Ибн ал-Асир).

[5] Шихаб ад-Дин Мухаммад ан-Насави, Жизнеописание султана Джалал ад-Дина Манкбурны, перевод с арабского, предисловие, комментарии, примечания и указатели З. М. Буниятова, Баку, 1973, с. 156 (այսուհետև՝ ан-Насави), «Մանր ժամանակագրություններ, XIII—XVIII դդ.», հ. 1, կազմեց Վ. Հակոբյանը, Երևան, 1951, էջ 39։

[6] Զ. Ա. Բոյլը („The Cambridge History of Iran", vol. 5, Cambridge, 1968, էջ 327), հետևելով Իբն ալ-Ասիրին, հայ վրացական զորքերի թիվը հաշվում է 70 հազար։ Սխալվում է Զ. Բունիաթովը՝ գրելով, թե Իբն ալ-Ասիրը ևս վկայում է 60 հազարի օգտին (ан-Насави, с. 361, прим. 1).

[7] «Վրաց ժամանակագրություն», էջ 59, Վարդան, էջ 143։

[8] Рашид ад-Дин, Сборник летописей, т. I, кн. вторая, М.—Л., 1952, с. 242. Պարսիկ պատմիչ Ջուվեյնին (რ. ჯოჯნაძე, ჯუვეინის ცნობები საქართველოს შესახებ, თბ., 1974, გვ. 29), ընդհակառակը, ավելի քան 30 հազար է հաշվում հայ-վրացական զորքերի թիվը։ Այսպիսով, Ջուվեյնիի և Ռաշիդ ադ-Դինի տեղեկությունները հակասում են իրար, քանի որ նրանցից որևէ մեկը, ինչպես երևում է, սխալմամբ հակառակորդ կողմին է վերագրել 30 հազար թվաքանակը։ Թեև Ջուվեյնին ժամանակով նախորդում է Ռաշիդ ադ-Դինին և թվում է թե սխալը պետք է թույլ տար առաջինի ասածները հաճախ կրկնող Ռաշիդ ադ-Դինը, որոշ նկատառումներ մտածել են տալիս թյուրիմացություն ակնկալել Ջուվեյնիի երկում։ Երկու հեղինակն էլ չափազանցված են ներկայացնում իրենց հավատակից Ջալալ ադ-Դինի հաջողությունները (И. П. Петрушевский, Вазир Шараф ал-Мульк, «Ближний и Средний Восток», М., 1962, с. 34) և դժվար է կարծել, որ նրանք իրականից երկու անգամ փոքր նշեին խորեզմշահի հակառակորդ բանակի թվաքանակը։ Ուստի պետք է կարծել, որ ավելի ճիշտ է Ռաշիդ ադ-Դինի վկայությունը, ուր խորեզմշահի զորքերի թիվը, ինչպես և սպասելի էր, նկատելիորեն սակավացված է։

[9] C. Cahen, 'Abdallaṭīf al Baghdādī et les Khwārizmiens („Iran and Islam, in memory of the late Vladimir Minorsky", Edinburgh University Press, 1971, p. 159).

[10] Ан-Насави, с. 157.